Դասապլան

Ուսուցիչ՝

Առարկա՝	Հանրահաշիվ	Ամսաթիվ		Կիսամյակ	1-ին	Դասարան		Դասաժամ	1
Խմբի կազմը՝	Աղջիկ՝	Տղա՝		ՇՏ՝		ՈՒՀԿ՝			
Թեմա՝	*Բազմանդամներ*								
Օգտագործվող նյութեր՝	*Առցանց գրատախտակ, տեսանյութ, գիրք*								
Ամբողջական պատկեր՝	*Աշակերտները արդեն սովորել են միանդամները բազմապատկել, բազմանդամները գումարել, հանել: Այսօր սովորելու ենք միանդամը բազմանդամով ինչպես բազմապատկել: Այս դասին հաջորդելու է բազմանդամների բազմապատկումը :*								
Դասի նպատակը՝	*Դասի նպատակն է՝ աշակերտներին սովորեցնել միանդամը բազմանդամով բազմապատկելու կանոնը: Դասին մասնակցելով՝ աշակերտները կկարողանան արտադրյալը ձևափոխել բազմանդամի:*								
Վերջնարդյունքները՝	**Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ**								
	Դասի ավարտին աշակերտը կկարողանա՝ • *ձևակերպել միանդամը բազմանդամով բազմապատկելու ալգորիթմը* • *Տրված արտադրյալը ձևափոխել բազմանդամի* • *Բազմանդամը բերել կատարյալ տեսքի:*								

Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Որպես թիրախ ընտրել եմ աշխատացնել այն աշակերտներին, ովքեր նախորդ տնային աշխատանքը թերի էին կատարել կամ չէին կատարել՝Գ,Վ, Ա,Վ, հետևելու եմ նրանց տեսախցիկներին և աշխատանքի որակին(հատկապես՝գրում են, թե ոչ): *Նաև ժամանակի կառավարում . այս դասարանում միշտ ժամանակը չի հերիքում:*	*Հետևել, որ տեսախցիկները միացված լինեն ու նաև դասի յուրաքանչյուր փուլում ստուգել՝գրում են, թե ոչ: Նաև պահանջել, որ դասի ավարտից հետո տնային աշխատանքը ուղղումներով նորից ներկայացնեն:*

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ *Ուսուցիչ*	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
10 10	*Հակիրճ ներկայացնել՝ ինչ են աշակերտները անելու դասի յուրաքանչյուր փուլում.* *-Տնային աշխատանքի ստուգում և ուղղում* - ***Սկզբում միասին կկրկնենք նախորդ դասերի անցածը.*** - ***պատասխանելու են հարցերին*** - - *Մտածելու են՝ ի՞նչ կարելի է անել , որպեսզի փակագծերից ազատվենք :* - ***Գրելու և ձևակերպելու ենք միանդամը բազմանդամով բազմապատկելու կանոնը:*** - *Գրելու են վարժություններ*	*Ի՞նչ եք անելու, որ օժանդակեք աշակերտներին .* *Աշակերտների օգնությամբ կբացատրեմ տնային աշխատանքում առկա անհասկանալի հարցերը* ***հարցեր եմ ուղղելու*** *լսելու եմ կարծիքներ , քանի որ քիչ թե շատ ծանոթ են բաշխական օրենքին* *Ամփոփելու եմ հիմնական մտքերը, նաև բացատրելու եմ:* ***Ձևակերպելու ենք բաշխական օրենքի կանոնը և գրելու եմ գրատախտակին:*** *Հարցադրումներ և վարժություններ* *Տարբերակում կատարվում է վարժությունների ընտրության մեջ:* *Թիրախային խմբում ներգրավված աշակերտներին տրվում են ավելի պարզ առաջադրանքներ, որոնք հետո հնարավոր է , որ բարդացվեն:*	***Այս փուլի նպատակն է՝ բոլորին ներգրավել դասի մեջ նախապատրաստել նոր դասի*** *Այս փուլի նպատակն է՝ խթանել մտածողությունն ու մարզել հիշողությունը:* ***Գրելը կօգնի, որ լսածն ու սովորածն ավելի ամրապնդվեն:*** *Վարժությունները կօգնեն, որ սովորածն ավելի ամրապնդվի:*

Տերմիններ Գրագիտություն Թվագիտություն	*Այս դասի տերմիններն են՝ միանդամ, բազմանդամ, գործակից, որոնք ծանոթ են իրենց։* *Վարժությունների մեջ աշակերտները պետք է կարողանան կատարել բանավոր բազմապատկում, գումարում, հանում , որը կնպաստի նրանց թվաբանական գործողությունների արագ կատարմանը։*		
Աջակցություն	*Այս դասին կարծում եմ որևէ մեկի օգնության կարիքը չի լինի։*		
Գնահատում	*Կկատարվի ձևավորող գնահատում։*		
Տնային աշխատանք	*Նախորդ տնային աշխատանքի մեջ կային վարժություններ, որոնք կօգնեն, որ այս դասն ավելի հեշտ յուրացվի։ Նաև տեղադրված է եղել տեսանյութ։*		